

# ԱՆՉԵՌՆՄԽԵԼԻ ԳՈՒՄԱՐԸ

Հ. Բ. Ը. Միութեան կտակներու եւ Նուիրատուութեանց տոմարին գլուխը արձանագրուած է հետեւեալ Յայտարարութիւնը, 1910 Յունուար 1 թուակիր:

«Միութեան անդրանիկ Կեդր. Վարչական Ժողովը, ներկայ յայտարարութիւնը Կտակներու եւ Նուիրատուութեանց տոմարին գլուխը դնելով, կ'երդնու կէտ առ կէտ եւ կատարեալ խղճատութեամբ գործադրել կտակարարներու կամքն ու բացայայտ տրամադրութիւն-ները. կը խոստանայ ո՛չ մէկ զինով թոյլ տալ որ որեւէ կամայական շեղում մը ըլլայ եւ կանխորոշ նպատակէ տարբեր ուղղութեամբ գործածուին կտակուած եւ նուիրուած գումարները. յանձն կ'առնէ մասնատր հոգածութեանը մատակարարել Միութեան կողմէ պաշտօ-նապէս ընդունուած եւ սոյն տոմարին մէջ արձանագրուած բոլոր Կտակները եւ Նուէրները, եւ այժմէն պարտք կը դնէ իր յաջորդներուն վրայ, միեւնոյն ուխտը կրկնելու իրենց պաշտօնին սկիզբը միեւնոյն յօժարամտութեամբ եւ նախանձախընդրութեամբ գործադրելու Միութեան Կտակներու եւ Նուիրատուութեանց յարակից պայմանները, առանց իրաւատէրին օրինական հաւանութեան՝ անոնցմէ ստորակէտ մը իսկ չփոխելու»:

(Ստորագրութիւնք – Պողոս Նուպար, Եագուպ Արթին Փաշա,  
Երուանդ Աղաթօն, Առաքել Նուպար,  
Տ.Փ. Փիլիպպոսեան, Կ.Յ. Շէրիտճեան,  
Տիգրան Զէլէկեան):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ»  
31 Յունուարի, 1925